ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը, *Երևան, «Գիտություն», 2007, 390 էջ:*

Հովհաննես Թումանյանի դերը բացառիկ է ոչ միայն հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ, այլև մեր ժողովրդի ազգային, հասարակական-քաղաքական կյանքում: Եվ նրա գործունեության այդ ոլորտը նույնքան խոր ու բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջում, որքան գեղարվեստական ստեղծագործությունը: Այդ ոլորտի վրա է սևեռված հայ թումանյանագետների ուշադրությունը: Վերջերս ընթերցողի սեղանին դրվեց մի նոր գիրք՝ նվիրված այնպիսի հարցերի ու խնդիրների, որոնք մինչ այդ հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել: Դա Ս. Հովհաննիսյանի գրախոսվող մենագրությունն է:

Աշխատության կարևոր արժանիքներից մեկը նախևառաջ նրա վավերագրական հագեցվածությունն է, փաստագրական նյութի հարստությունը, որը, իհարկե, գիտական իմաստավորման, վերլուծության ու մեկնության առարկա է դարձել: Թերևս դա այն պարտադիր նախապայմանն է, առանց որի անհնար էր վերստեղծել Հայ գրողների կովկասյան ընկերության տասնամյա գործունեության պատմությունը Թիֆլիսում, ընկերություն, որի անփոփոխ նախագահը՝ սկսած 1912 թվականից, Հովհաննես Թումանյանն էր: Նշենք, որ հեղինակը ներկայացնում է նաև այդ ընկերության նախապատմությունը: Առաջին գլխում բավական մանրամասն պատմվում է «Վերնատուն» գրական խմբի մասին, որը 1897 թ. մի քանի տարի գործում էր Թումանյանի բնակարանում: Խոսվում է նաև XX դարում նոր գրական միավորումներ ու ընկերություններ ստեղծելու փորձերի մասին, փորձեր, որոնք, ավա՛ղ, հաջողությամբ չպսակվեցին… Սակայն այդ ամենը յուրահատուկ նախադրյալ, նախաշեմ դարձան Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրման համար՝ գրական առաջին կազմակերպության, որը պաշտոնապես գրանցված էր պետության կողմից և ուներ իր Կանոնադրությունը (այն գրքում բերվում է որպես հավելված):

Մենագրությունը գրվել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող՝ ընկերության արխիվի հիմնավոր ուսումնասիրության հիման վրա: Այդ նյութերից են ընկերության վարչության նիստերի, անցկացված միջոցառումների արձանագրությունները, ինչպես նամակագրությունը հասարակական-մշակութային զանազան կազմակերպությունների հետ ու բազմաթիվ այլ կարևոր փաստաթղթեր: Գրքում լայնորեն ընդգրկված են նաև Հովհաննես Թումանյանի անձնական արխիվի նյութերը: Ի դեպ, այս մանրազնին ուսումնասիրությամբ հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել և թումանյանագիտությունը հարստացրել նորահայտ նյութերով: Բերենք ընդամենը մեկ օրինակ. դեռևս 1990-ական թվականների կեսերին Ս. Հովհաննիսյանը պարբերական մամուլում հրապարակեց իր հայտնաբերած՝ Հովհ. Թումանյանի մի քանի անհայտ հոդվածներ (այդ մասին տե՛ս 84–93 էջերը): Ներկայումս դրանք տեղ են գտել բանաստեղծի երկերի լիակատար ակադեմիական ժողովածուի մեջ (հ. 7, 8): Բացի արխիվային նյութերից, մենագրության մեջ օգտագործվել են ժամանակակիցների հիշողությունները, հայ և այլազգի գրողների նամակները, մի խոսքով, հեղինակի ուշադրությունից չի վրիպել այն ամենը, ինչ ուղղակի կամ անուղղակի ձևով կապված է հետազոտվող խնդրի հետ: Ուսումնասիրվել է նաև ժամանակի պարբե-

բական մամուլը՝ հրատարակված թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում: Ինչպես ցույց է տրված գրքում, այդ պարբերականները լայնորեն լուսաբանում էին (թեև ոչ միշտ անաչառ ու ճշմարտացի) Հայ գրողների կովկասյան ընկերության կազմավորման և գործունեության հետ կապված ամենատարբեր հարցերը:

Ընկերության բուն գործունեությունը մենագրության մեջ դիտարկվում է ոչ թե ժամանակագրական, այլ պրոբլեմային–թեմատիկ կտրվածքով, բազմաթիվ այն հարցերի ու խնդիրների համատեքստում, որոնք մշտապես գտնվում էին ընկերության ուշադրության կենտրոնում: Եթե հիշենք, թե ինչպիսի ժամանակաշրջանում էր գործում գրական այդ կազմակերպությունը, իսկ դա 1912–1922 թվականներն էին, և եթե հաշվի առնենք, որ այն գլխավորում էր ոչ այլ ոք, քան Թումանյանը, ապա պարզ կդառնա, որ այդ ընկերության գործունեությունը ոչ մի կերպ չէր կարող սահմանափակվել զուտ գրական և մշակութային հարցերով ու խնդիրներով: Եվ միանգամայն օրինաչափ ու հիմնավորված է, որ հետազոտության մի ամբողջ բաժին նվիրված է Կովկասյան ընկերության գործունեությանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ հայ ժողովրդի պատմության ամենաարյունոտ, ողբերգական ժամանակաշրջանին…

Ինչպես նշում է հեղինակը, այդ և հետպատերազմյան տարիներին ընկերության ողջ գործունեությունը կենտրոնացել էր հիմնականում ազգային խնդիրների շուրջ: Դրանք գրական միջոցառումներ, երեկոներ էին, որոնք իրենց թեմատիկայով համահունչ էին ժամանակին (Լեոյի, Կարեն Միքայելյանի և այլոց զեկուցումները) և որոնցից գոյացած գումարները տրամադրվում էին պատերազմի վիրավորներին, գաղթականներին, սովյալներին… Դրանք նաև տարբեր երկրների կառավարություններին, ակադեմիաներին, խմբագրություններին, անվանի գրողներին ու հասարակական գործիչներին ուղղված կոչեր էին, կոչեր, որոնցով ընկերությունը դիմել է երկու անգամ՝ 1915 թվին և 1918 թ. ամռանը, երբ բոլշևիկների հրամանով ռուսական զորքը սկսեց թողնել Արևմտյան Հայաստանի իր իսկ կողմից գրավված տարածքները… Այն ժամանակ՝ 1918 թ., Թումանյանն անձամբ էր այցելում Թիֆլիսում տեղակայված տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին և, ինչպես նշում է Ս. Հովհաննիսյանը, «ակամայից ստանձնում է ազգային-քաղաքական գործչի, դիվանագետի պարտականություններ՝ պետական կարևոր ատյաններում ներկայացնելով իր ժողովրդի շահերը» (էջ 129):

Մենագրության մեջ ուշագրավ բազմաթիվ փաստեր են բերվում ընկերության հայրենասիրական գործունեությունից (մասնավորապես՝ ցուցաբերած օգնությունը որբերին, նրանց տեղաբաշխումը ըստ կացարանների ու որբանոցների, առավել օժտված ու տաղանդավոր որբերին մշտական խնամակալության տակ վերցնելը և այլն), և այդ բոլոր փաստերը, ըստ ամենայնի, լրացուցիչ նրբերանգներով են հարստացնում շատ հայ գրողների, ընկերության անդամների բնութագրերը: Սակայն նրանց շարքերում առավել վառ ու լուսավոր է Թումանյանի անձն ու կերպարը: Նա, ղեկավարելով գրողների կազմակերպությունը, ամենևին չէր բավարարվում կարգադրություններ ու հրահանգներ տալով: Մեծ բանաստեղծը երբեք իրեն հեռու չէր պահում իր ժողովրդի վշտից: Այն, որ նա, կյանքը վտանգելով, երկու անգամ՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915 թ. հունիս-սեպտեմբեր, եղել է եղերական իրադարձությունների ամենաթեժ վայրերում՝ Արևմտյան Հայաստանում, իսկ այնուհետև՝ Էջմիածնում՝ անշուշտ, հայտնի փաստեր են, սակայն գրքի մեջ օգտագործված Թումանյանի ծոցատետրային գրառումները (որոնցից, ինչպես ցույց է տալիս Ս. Հովհաննիսյանը, բազմաթիվ կապող թելեր են գնում դեպի նրա որոշ բանաստեղծությունները և հատկապես քառյակները), նաև բանաստեղծի դստեր՝ Թամար Թումանյանի կողմից 1988 թ. Ս. Հովհաննիսյանին տրամադրված արխիվային որոշ նյութե-

ը թույլ տվեցին նրան կոնկրետությամբ ու ամբողջականությամբ լուսաբանել Թումանյանի ազգանվեր գործունեությունը էջմիածնում, ցույց տալ, թե ինչպես նա ինքնակամ ստանձնեց կազմակերպչական բազմաթիվ հարցեր, ինչպես նա անում էր ամեն ինչ, որպեսզի գեթ մի փոքր թեթևացնի գաղթականների և որբերի տանջանքներն ու տառապանքները: Ս. Հովհաննիսյանը նշում է, որ բանաստեղծը վիթխարի քանակով նամակներ ու հեռագրեր էր ստանում գաղթականներից, վիրավորներից, հիվանդներից… Հենց նրան էին դիմում մարդիկ, նրան էին ապավինում, նրանից էին սպասում իրական օգնություն: Աշխատության մեջ բերված այդ բոլոր նյութերը գալիս են մեկ անգամ ևս հաստատելու բանաստեղծի խոստովանության իրավացիությունը նրա հայտնի քառյակներից մեկում.

Զուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ է ինձ կապում,
Ամենքի հետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում[1]:

Ինչ վերաբերում է զուտ մասնագիտական, գրական-մշակութային հարցերին, ապա ընկերության գործունեությունն այդ ոլորտներում մենագրության մեջ լուսաբանված է իր ամբողջ բազմակողմանիությամբ, և այդ գործունեության մի շարք կողմեր մեր օրերում, գրեթե հարյուր տարի անց, ձեռք են բերում միանգամայն արդիական հնչողություն: Օրինակ, մեծ սրությամբ է դրված գրողի նյութական վիճակի խնդիրը, պայքարն այն բանի համար, որ նրա աշխատանքը համարվի մասնագիտություն: Ս. Հովհաննիսյանը նշում է, որ Թումանյանն այդ խնդրին է անդրադարձել բազմաթիվ անգամ, ընդգծելով, որ բանաստեղծը, գրողը չի կարող ամբողջովին ինքնադրսևորվել, ողջ էությամբ ծառայել իր կոչմանն ու տաղանդին, եթե մշտապես ծանրաբեռնված է ամենօրյա կենցաղային խնդիրներով ու հոգսերով (տե՛ս 65–79 էջերը): Թումանյանը համարում էր, որ հասարակությունը, պետությունը պետք է իր վրա վերցնի այդ խնդրի լուծման գործը: Նա պայքարում էր Գրական ֆոնդ ստեղծելու համար, և գրողների ընկերության կողմից ստեղծված այդ հիմնադրամն անհրաժեշտ նյութական օժանդակություն էր ցուցաբերում հայ գրողներին:

Կարծում եմ, այսօր ոչ պակաս արդիական հնչողություն են ստանում նաև մենագրության այն էջերը, որտեղ խոսվում է Թումանյանի պայքարի մասին հեղինակային իրավունքները պաշտպանելու ուղղությամբ (էջեր 223–228): Բանաստեղծն այդ հարցը բարձրացնում էր գրողների ընկերության հիմնադրման առաջին իսկ օրերից, քանի որ քիչ չէին այնպիսի դեպքեր, երբ կողմնակալ մամուլը միտումնավոր աղավաղված էր ներկայացնում առանձին զեկուցումների, դասախոսությունների բովանդակությունը (օրինակ, Լ.Եոյի դասախոսությունը Աբովյանի մասին): Հեղինակի իրավունքների պաշտպանության խնդիրը բազմիցս քննարկվում էր ընկերության վարչության նիստերի ժամանակ, Թումանյանն այդ մասին գրել է հոդվածներ… Ու թեև առանց պետական կառույցների աջակցության ու որոշման, ընկերությանն այդպես էլ չհաջողվեց համապատասխան օրենքի ընդունման հասնել, այնուամենայնիվ, ընկերության ողջ գործունեությունը շարունակական, մշտական պայքար էր գրողի բարձր հեղինակության համար՝ հանուն պարբերական մամուլում հաղորդումների անաչառ լուսաբանման:

Մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում գրքի այն էջերը, որոնք նվիրված են ընկերության կազմակերպած գրական բազմաթիվ միջոցառումներին, իրականացրած հիանալի նախաձեռնություններին (օրինակ Սայաթ-Նովայի հուշարձանի բացումը Թիֆլիսում): Նույնիսկ ընթերցողին քաջածանոթ պատմագրական փաստերը գրքում հարստացվում են արժեքավոր նորանոր մանրամասներով: Այսպես, պարզվում է, որ 1852 թ. Գ. Հախվերդյանի հրատարակած Սայաթ-Նովա-

[1] *Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, էջ 333:*

յի երգերի ժողովածուն հիմնականում վաճառվել է տասնամյակներ անց, 1914 թ., երբ Հայ գրողների կովկասյան ընկերության ջանքերով բացվեց մեծ բանաստեղծ-աշուղի հուշարձանը: Ուշագրավ է նաև գրական զանազան միջոցառումների թեմատիկայի ընդգրկունությունը. հին և միջնադարյան հայ գրականություն, XIX դարի գրողներին ու բանաստեղծներին նվիրված հուշ-երեկոներ (Աբովյան, Նալբանդյան, Ռաֆֆի, Պատկանյան և ուրիշներ), արևելահայ և արևմտահայ ժամանակակից գրականություն, համաշխարհային դասականների հոբելյաններ (Սերվանտես, Շեքսպիր և այլն), գրականության տեսության և գրաքննադատության խնդիրներ, գեղարվեստական գրականության լեզվի հարցեր, գրական փոխհարաբերություններ (Վ. Բրյուսովի այցելությունը Թիֆլիս և նրա զեկուցումները հայ պոեզիայի և հայ ժողովրդի պատմության մասին) և այլն: Մենագրության հեղինակին հաջողվել է վերստեղծել ու ներկայացնել գրական միջոցառումների ժամանակ տիրող ոգևորության մթնոլորտը, ինչպես նաև այդ երեկոներն ուղեկցող կենդանի բանավիճային ոգին, որը նույնպես վկայում է քննարկվող հարցերի ու խնդիրների արդիականության, քննադատական մտքի աշխուժացման մասին: Շարադրելով նյութը՝ Ս. Հովհաննիսյանը ամեն անգամ մեկնաբանում է այն իր անաչառ գնահատականներով: Այսպես, նա թույլ է համարում Մ. Մատենճյանի զեկուցումը Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսի մասին (էջեր 163-165), բանավիճում է այդ նույն զեկուցողի կարծիքի հետ Գրիգոր Զոհրապի ստեղծագործության առնչությամբ (էջ 169), սխալ է համարում Վահան Տերյանի պոեզիային տրված Վ. Ահարոնյանի գնահատականը (էջեր 166–167) և այլն:

Մենագրության մեջ ներկայացված գրական միջոցառումների, քննարկումների, բանավեճերի լայն համայնապատկերում ընթերցողն ակամայից իր համար առանձնացնում է Հայ գրողների կովկասյան ընկերության առավել ակտիվ գործիչների անունները, որոնց դասախոսությունները, զեկուցումները, ելույթները հատկապես հաճախ էին անցկացվում: Այդպիսի գործիչներ էին, օրինակ, Լեոն, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ: Ս. Հովհաննիսյանի մենագրությունն այս իմաստով կարծես նոր թեմաներ է հուշում գրականագիտական ուսումնասիրությունների համար (բնական է, եթե այդ թեմաները դեռևս հետազոտված չեն): Դրանց թվում կարելի է նշել, օրինակ, Լեոյի կամ Դ. Դեմիրճյանի գրաքննադատական ժառանգությունը…

Այնուամենայնիվ և դա միանգամայն բնական է, մենագրության գլխավոր հերոսը Հովհաննես Թումանյանն է, որն այս գրքում հառնում է իր ողջ մեծությամբ, իր տիեզերական ոգու ամբողջ անհունությամբ: Եվ ընթերցողը նրա կարծես թե այնքան ծանոթ ու հարազատ կերպարի մեջ ամեն անգամ ինչ-որ նոր գծեր է բացահայտում և զարմանում, թե ինչպես են այդ մարդու մեջ զուգորդվում, համադրվում և՛ վեհ ստեղծագործական թռիչքները, և՛ կազմակերպչական մեծ տաղանդը, և՛ մարդկային զարմանալի բնազդը, կանխազգացումը, գրական, քննադատական զգացողությունը և՛ ժամանակի սուր ընկալումը և՛ հավատարմությունը սեփական բարոյաէթիկական սկզբունքներին…

Ս. Հովհաննիսյանի մենագրությունը, որտեղ առաջին անգամ ուսումնասիրվում է Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը, գործունեությունը և նշանակությունը, նշանակալի ներդրում է հայ թումանյանագիտության մեջ:

ՄԱԳԴԱ ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ